



ԻՄԱՆՈՒԹԻԼ ԿԱՆՏ



Իմանուիլ Կանտ

Մասերիայի, փարածության ու ժամանակի մասին գերմանացի փիլիսոփա Ի. Կանտի պարկերացումները չափազանց ինքնատիպ են ու հերաքրքիր: Համաձայն նրա հայացքների՝ փարածությունն ու ժամանակը իրերի օբյեկտիվ հատկություններ չեն և օբյեկտիվորեն՝ մարդու գիտակցությունից անկախ չեն կարող գոյություն ունենալ:

Դրանք ոչ այլ ինչ են, քան զգայական հայեցողության ապրիորի ձևեր: Ասել է, թե մենք օբյեկտիվ իրականությունը ընկալում ենք ներքաշելով այն մեր բանականության կառուցվածքով պարտադրվող փարածական ու ժամանակային

ձևերի մեջ: Այլ խոսքով՝ փարածությունն ու ժամանակը մեր զգայական ընկալումն է սրեղծում: Օրինակ, եթե մեր րեստոլական ապարապն ունենար սովորական ֆորոապարապի կառուցվածք, ապա մենք իրերը կընկալեինք միայն հարթության մեջ: Եվ մեր րեսած հարթ աշխարհը կլիներ ոչ թե օբյեկտիվ աշխարհի հատկությունը, այլ մեր զգայական հայեցողության արդյունքը, նրա սրեղծագործությունը: Նույն կերպ, ըստ Կանտի, եթե մենք աշխարհն ընկալում ենք եռաչափ և էվկլիդեսյան երկրաչափության օրենքների համապարասիան, դա ամենևին չի նշանակում, թե աշխարհն օբյեկտիվորեն այդպիսին է: Դա ընդամենը նշանակում է, որ արտաքին աշխարհը ընկալելու մեր ձևն է այդպիսին:

Այսպիսով, Կանտը պնդում է, որ փարածությունն ու ժամանակը իրենց բոլոր հատկություններով պարտական են մեզ և ոչ թե օբյեկտիվ աշխարհին: Քանի որ փարածությունը սուբյեկտիվ է, ուրեմն, նրա երկրաչափությունն էլ է սուբյեկտիվ: Ասել է, թե էվկլիդեսյան երկրաչափությունը պիտի լինի փարածությունը նկարագրող միակ երկրաչափությունը: Այլ երկրաչափություններ հնարավոր չեն, քանի որ դա կենթադրեր այլ րիայի ընկալող սուբյեկտների՝ զգայական այլ կառուցվածքով արտածների գոյությունը:

Կանարը նույն կերպ բացատրում էր նաև պարձառականության սկզբունքը. ոչ թե մի երկույթ պարձառ է դառնում մեկ այլ երկույթի առաջացման, այլ մեր բանականության կառուցվածքն այնպիսին է, որ չենք կարող երկույթներն այլ կերպ ընկալել ու ըմբռնել, քան պարձառահեղանքային կապերի ու հարաբերությունների մեջ: Գիտության զարգացումը ցույց տվեց, որ Կանարն, այնուամենայնիվ, սխալվում է: Մաթեմատիկայում երևան եկան ոչ էվկլիդեսյան երկարաչափություններ (Լորաշևսկի, Ռիման), որոնք տրամաբանորեն նույնքան ճշմարիտ են ու անհակասական, որքան էվկլիդեսյանը: Այնչպայնի հարաբերականության ընդհանուր տեսությունը ցույց տվեց, որ տարածության ու ժամանակի հարկությունները (այդ թվում՝ նաև տարածության էվկլիդեսյանությունը կամ ոչ էվկլիդեսյանությունը) կախված են նրանցում տեղակայված նյութի զանգվածից: